

ԵՂԵՂ Է ԱՐԴՅՈՒ «ՍԱՐՈՍԱՆԵԱՅՆ» («ՍԱՐՈՍԱՆԻՔ»)
ԿԱՄ «ՍԱՐՈՍԱՅՆՆԵՐ» ՑԵՂ

ՇԱՎԱՐԵ ՍՄՐԱՏԱՆ

«Աղվանից աշխարհի պատմության» վ. Առաքելյանի կազմած և շուտով հրատարակվելիք քննական բնագրի Ա գրքի Ի է գլխում, որը նվիրված է Մեսրուպ Մաշտոցի գործունեությանը՝ Կուր գետից հյուսիս՝ Կովկասյան լեռնաշղթայի հարավային ստորոտներում բնակվող ցեղերին կրկին անգամ քրիստոնյա դարձնելուն, կա այսպիսի նախադասություն. «Բոլորովին բարոզ և առաքելալ խուժադուժ սարոստանեացն լինելով՝ ըստ նոցին բարբառոյ դպրութեան առնէր զնոսա ծանօթս»: Նրա աշխարհաբար թարգմանությունն է. «Միաժամանակ բարոզիչ ու առաքյալ լինելով վայրենաբարո սարոստայններին իրենց լեզվով դիր ու զրականության էր ծանոթացնում»¹ (ընդգծումը մերն է—Շ. Ս.): Սարոստայններին բառը, առանց որևէ աղբյուր նշելու, ծանոթադրված է. «Սարոստայնները Հյուսիսային Կովկասում ապրող ցեղ էին, ըստ Կաղանկատվացու Մեսրոպ Մաշտոցը սրանց զրազիտություն էր սովորեցնում»²:

Ինչ ասել կուզի, որ այս տեղեկությունն ինքնըստինքյան հատուկ ուշադրության է արժանի, որովհետև ուրիշ աղբյուրներից հայտնի չէ, թե Մեսրոպ Մաշտոցը երբևէ եղած լինի Հյուսիսային Կովկասում: Ովքե՞ր են սարոստայնները, այս ի՞նչ նորահայտ ցեղ է:

Սարոստայններ կարծեցյալ ցեղի մեր որոնումները, սակայն, ոչ մի արդյունք չտվեցին: Ոչ հայ, ոչ օտարազգի հեղինակների մոտ մեզ չհաջողվեց գտնել մի այլ հիշատակություն՝ հիշյալ ցեղի մասին: Եվ, այսուհանդերձ, չի կարելի ասել, թե մեր սրբապատմաները բոլորովին ապարդյուն անցան: Պարզվեց, որ մի շարք բառարանների հեղինակներ ուշադրություն են դարձրել Մովսես Կաղանկատվացու տվյալ վկայությանը և վերականգնելով սարոստանեացնի ուղիղ ձևը՝ սարոստանիւի, զետեղել են այն իրենց բառարաններում: Այսպես, սարոստանիւ բառը գտնում ենք «Նոր բառգիրք Հայկազեան լեզուի»-ում, ինչպես նաև Գր. Փեշտրմալճյանի և Ստ. Մալխասյանցի բառարաններում: Ընդ որում, «Նոր բառգիրք» այն բացատրում է՝ լեռնականք, բնակիչք Կովկասու, Գր. Փեշտրմալճյանը նույնությամբ կրկնում է այդ բացատրությունը՝ հղելով Մովսես Կաղանկատվացու վերը բերված նախադա-

¹ Մովսես Կաղանկատվացի. Պատմություն Աղվանից աշխարհի. Թարգմանությունը, առաջաբանը և ծանոթադրությունները՝ Վարդ Առաքելյանի, Երևան, 1969, էջ 70:

² Նույն տեղում, ծան. 119, 2. Դոմենթը այս բառը յաղելով բառարաններից՝ Թարգմանել է «A perfect preacher and apostle to the barbarous mountain tribes, he taught them to write in their own language» („The History of the Caucasian Albanians by Movses Daskuranci“, translated by C. J. F. Dowsett, London, 1961, p. 55).

սուբյուր, իսկ Ստ. Մալխասյանցը, որ, ամենայն հավանականությամբ, այս բառը փոխ է առել վերոհիշյալ բառարաններից, փորձում է ավելի ստույգ բացահայտել բառի իմաստը՝ «Սարոստանիք(ննաց. յոգն.) գ. Իբրև սարաստանցիք՝ սարեցիկներ՝ լեռնաբնակ ժողովուրդներ»³, ինչպես տեսնում ենք, Ստ. Մալխասյանցը սարոստանիք՝ այսինքն Մովսես Կաղանկատվացու սարոստանեացր նույնացնում է սարոստանցիք բառի հետ։ Մեր կարծիքով բաղմերախտ գիտնականը տվյալ դեպքում սխալվում է։ Սարոստանեացր վկայված է միայն Մովսես Կաղանկատվացու «Աղվանից աշխարհի պատմության» մեջ։ Մենք այս ասում ենք ելնելով այն հանգամանքից, որ և՛ «Նոր բառգիրք», և՛ Կր. Փեշտրմալճյանը նրանց համարում են Կովկասյան լեռների բնակիչներ, իսկ Ստ. Մալխասյանցն էլ իր հերթին, ինչպես վերև ասացինք, բառիս մեկնությունը բաղել է վերոհիշյալ բառարաններից։ Համենայն դեպս նա չի նշում ուրիշ աղբյուր։ Իսկ մեզ հայտնի չէ սարոստանիք ցեղանուն՝ հայ դասական հեղինակների երկերում։ Մեր կարծիքով սարոստանեացն բառ չկա ընդհանրապես և, հավանաբար, զրազրական այլընթերցման արդյունք է։

Ի՞նչ հիման վրա ենք այսպիսի եզրակացություն հանգել։ Արդյոք կովաններ ունենք դրա համար։ Այո՞, ունենք։ Նախ և առաջ նշենք, որ «Աղվանից աշխարհի պատմության» ձեռագրերում սարոստանեացր հանդես է գալիս նաև հետևյալ տարընթերցումներով. AGH ձեռագրերը ունեն սարոստայնեացն, BCEL՝ ձեռագրերը՝ սարոստայնեաց։ Ն ցուցական հոդով, թե առանց նրա, և Կիսաձայնով, թե առանց նրա, միևնույնն է, սարոստանեացն բառը տվյալ վկայության մեջ մնում է անհասկանալի և անիմաստ։ Ուստի կարծում ենք, որ այն ճիշտ չի մուծվել համեմատական-քննական բնագիր։

Մ. էմինը «Աղվանից աշխարհի պատմության» բնագիրը տպագրության պատրաստելիս սարոստանեացն սրբագրել է սարոստանեացն⁴։ Եվ ճիշտ է արել։ Ընդամենը մի տառ է դուրս գցել՝ ս տառը և բառը միանգամից իմաստավորվել է, թեև մինչև այժմ այն չի նկատվել և տեղ չի գտել բառարաններում։

Ուրեմն տեսնենք, թե ի՞նչ է նշանակում սարոստանեացն։

Նախ քնենք «Աղվանից աշխարհի պատմության» ձեռագրում վկայված մի ուրիշ բառ, որի ստուգաբանությունը կօղնի հասկանալու նաև սարոստանեացն բառի իմաստը։ Բ դրքի Ժէ գլխում կարդում ենք. «Ն ի գալ հրովարտակին՝ պատահի նմա ի սարոտն գաձաղին Գարդմանայ...»։ Թարգմանիչները մինչ այժմ սխալ են հասկացել սարոտն բառը։ Այսպես՝ Բ. Պատկանյանի ոտսերեն թարգմանության մեջ գրված է. «Последний встретил его в Горн-

³ «Նոր բառգիրք Հայկազեան լեզուիս», Է. Բ. Վենետիկ, 1837, էջ 701, Գր. Փեշտրմալճյան, Բառգիրք Հայկազեան լեզուի, Կ. Բ. Կոստանդնուպոլիս, 1846, էջ 638. Ստ. Մալխասյանց, Հայերեն բացատրական բառարան, Կ. Կ. Նրևան, 1945, էջ 193—194։

⁴ Հատիկական տառերը փոխարինում են քննական բնագրում օգտագործված ձեռագրերի համարներին՝ А—№ 1531 (1289), В—№ 1725 (1664), С—№ 2561 (1664), Е—№ 8035 (1848), Г—№ 2646 (1761), Л— Լենինգրադում գտնվող ձեռագրին (XVII դ.), Н— Անթիլիանում գտնվող ձեռագրին (XVIII դ.)։

⁵ «Մովսեսի Կաղանկատվացու Պատմություն Աղուանից աշխարհի», ի լույս ընծայեաց Մկրտիչ Էմին, Մոսկվա, 1860, էջ 70։

стой области Гардмана»⁵, Թարգմանիչը տողատակ ծանոթագրության մեջ հատկապես նշում է, որ հայերենում սաբոտ բառը նշանակում է гористый՝ Բայց, շարունակում է նա, այստեղ բառը սկսվում է մեծատառ Ս-ով, ուստի այն կարող է հասկացվել նաև որպես հատուկ անուն գավառի՝ Թարգմանում, Սակայն որքան հայտնի է այդպիսի գավառ գոյություն չի ունեցել Հայաստանում ընդհանրապես: Թարգմանն ինքը Հայաստանի Ուտիք նահանգի հյուսիս-արևմտյան ոչ մեծ ծայրագավառն է՝ ընկած Կուր գետի և նրա աջ վտակ Կողրա փոքրիկ գետակի միջև մի հարթավայրում⁶: Ոչ «Աշխարհացոյց»-ում, ոչ էլ հայ կամ օտար հեղինակների մոտ չի կարելի գտնել Սաբոտն տեղանուն: Մյուս կողմից, չի կարելի նաև գրաբարյան սաբոտն բառը հասկանալ այնպես, ինչպես մենք այսօր աշխարհաբարում հասկանում ենք ֆաբրիկա, լեռնոտ բառերը՝ ֆաբրիկա երկիր, լեռնոտ երկիր բառակապակցություններում, ինչպես այն, ի միջի այլոց, հասկացել են «Աղվանից աշխարհի պատմության» թարգմանիչները

Վերը տեսանք, որ Բ. Պատկանյանը թարգմանել է՝ «...в Гористой области Гардмана», Վ. Առաքելյանը թարգմանել է՝ «...Թարգման լեռնոտ գավառում»⁷, Զ. Դովսեթը՝ նույնպես՝ «...In the hilly canton of Gardman»⁸:

Ճիշտ է, գրաբարում, ինչպես նաև այսօր էլ աշխարհաբարում կան և գործ են ածվում ուտ, ուտ ածանցները, որոնք ունեն խիտ, քանձ, շատ իմաստը: Վերը բերված ֆաբրիկա, լեռնոտ բառերի կողքին հիշենք խնձորուտ, տանձուտ, կաղնուտ բառերը⁹: Դժվար չէ նկատել, որ ուտ և օտ ածանց-

⁵ «История агван Монсея Каганкатваци, писателя X века», СПб., 1861, с. 136.

⁶ Ս. Ս. Երևմյան, Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի (Փորձ VII դարի Հայկական բարոյեզի վերակազմության ժամանակակից քարտեզագրական հիմքի վրա), Երևան, 1963 (տե՛ս կից բարտեզը):

⁷ Մ ո վ ս ս ի Կ ա ղ ա ն կ ա տ վ ա ջ ի, Պատմություն Աղվանից աշխարհի, էջ 133:

⁸ «The message reached Mliran in the hilly canton of Gardman» («The History of the Caucasian Albanians by Movses Dasxuranci», p. 108).

⁹ V դ. հայերեն թարգմանված «Փիլոնի այնցիկ որ ի լինելութեան խնդրոց և լուծմանց» երկում ուտ ածանցով վկայված է մի ուրիշ գեղեցիկ բառ՝ քոնուտ. «Իսկ յորժամ թոնուտ, գառաւելիւն արգելով՝ ընդ այլ առնել զգնացն» («Փիլոնի Երբայց ոյց մնացորդք ի հայս որ էն մեկնութիւն ծննդոց եւ ելից», Վենետիկ, Ս. Ղազար, 1826, էջ 12), Քոնուտ բառը պահպանվել է նաև հայոց Գյուտ Արաւելագցի կաթողիկոսի՝ Աղվանից Վաթ թագավորին գրած նամակում («Մ ո վ ս ս ի Կ ա ղ ա ն կ ա տ ու ա ջ ո յ Պատմութիւն Աղուանից աշխարհի», էջ 19): Հ. Աճառյանը քոնուտ բառը բխցնում է թոն բառից. որ նշանակում է տեղատարափ անձրև: Աճառ. Աճառյանի բացատրությունը. «թոնուտ—գալիս է պարզական թա արմատից»-օն մասնիկով. այսպես՝ թաւն թաւն թոն, հմտ. ձոն բառը» (Հ.ր. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հ. II, Երևան, 1973, էջ 150), Հայ մատենագրությանը անտեղյակ լինելու և գրարարի ուղղագրությունը չգիտենալու պատճառով ա՛յս արդեն տասը տարուց ափնի ինչ Վ. Ղուկասյանը բառարաններում որոնում է, բայց չի կարողանում գտնել քաւնուտ բառը: Համոզված լինելով, որ եթե սուտը պարբերաբար կրկնվի՝ ճշմարտության տեղ կանցնի, արդեն բանիբորոգ անգամ նա հրապարակավ պնդում է, թե քաւնուտ բառը չկա հայոց լեզվի օրառարաններում: Նա կաշվից դուրս է դալիս քաւնուտ, աշնուտ բառերը, որ պահպանվել են Գյուտ կաթողիկոսի նամակում, և մի քանի այլ բառեր բացատրելու ուղիներով, առանց մտածելու, թե հայոց կաթողիկոսը, որ իր ժամանակի ամենագարգացած մարդկանցից էր, հայերեն չգիտեր ի՞նչ է, որ ուղիերեն բառեր գործածեր. Բոլոր նման մարդասերներ Վ. Ղուկասյանին հարկավոր են նրա համար, որպեսզի «հիմնավորի» այն անհեթեթ միտքը, թե իբր «Աղվանից

ները վերցրում են շունեն, մինչդեռ գրաբարյան սարուտն և լեռնուտն բառերը բարդ բառեր են և կազմված են սառ և ոտն, լեռ և ոտն հայերեն բառերից, որտեղ երկրորդ արմատը՝ ոտն, քնիկ հայ բառ է՝ իր արմատական ն-ով, Գրաբարում ոտն անկարելի է պատկերացնել առանց ն-ի, որը, ինչպես հայտնի է, հանդես է գալիս նաև Արագած+ոտն, Մասսեաց+ոտն, Առ-նի+ոտն բարդ բառերում¹⁰, և ունեն միևնույն ստորուտ իմաստը։ Այդ իմաստով լեռնուտն բառը վկայված է Մովսես Խորենացու մոտ՝ հղովված լեռնուտին ձևով։ Պատմելով Բելի դեմ Հայկ նահապետի ապստամբության մասին, Մովսես Խորենացին գրում է. «Երթեալ քնակ է ի լեռնոտին միում ի դաշտավայրի...»¹¹։ Քիչ ստորև կարդում ենք՝ «Ամասիա... անցանէ զգետովն մերձ ի լեռոնն հարաւոյ, և շինէ անդ առ խորշիւք լեռնոտինն մեծամեծ ծախիւք երկուս տունս...»¹²։ Ինչպես տեսնում ենք, լեռնուտն բառը Մովսես Խորենացին գործ է ածել լեռան ստորուտ իմաստով և նրա Թարգմանիչները հենց այդպես էլ Թարգմանել են¹³։ Չմոռանանք ասել, որ բառարաններն էլ այդպես են

աշխարհի պատմությունը՝ հայերեն է Թարգմանվել աղվաներենից (В Гукасян, Удипские слова в «Истории Албан» Моисея Утййского («Известия Азерб. ССР», серия литература, язык и искусство, 1968, № 1, с. 53—61), В о р о ш и л Г у к а с я н, О некоторых вопросах истории Албанской письменности и литературы (նույն տեղում, № 2, с. 85—101), Քանի որ Վ. Ղուկասյանը չի կարողանում բան, լրանուտ բառերը գտնել հայոց լեզվի բառարաններում, օգնության կարգով նշենք այն բառարանները և այն էջերը, որտեղ դրանք բացատրված են. «Նոր բառգիրք Հայկազեան լեզուի», հ. Ա. Վենետիկ, 1836, էջ 824, Գր. Փ է շ տ ը մ ա լ ճ ե ա ն, Բառգիրք Հայկազեան լեզուի, հ. Ա. Կոստանդնուպոլիս, 1844, էջ 475, Ս տ. Մ ա լ խ ա ս յ ա ն ց, Հայերեն բացատրական բառարան, հ. Բ, Երևան, 1944, էջ 133, Հր. Ա ճ ա ո յ ա ն, Հայոց լեզվի արմատական բառարան, հ. II, էջ 150։

¹⁰ Հետաքրքրական է նշել, որ Թովմա Արծրունիին միայն մեկ անգամ է Առնիտներ օգտագործել միասին։ Մյուս բոլոր դեպքերում ստն նա գրում է անջատ։ Այսպես՝ «... որ կոշի ոտն Արագածոյ, ...զՈտնն Առնոյ, զոտն Առնոյ, ...և մինչև ցԱրագածն կոշեցեալ ոտն («Մովմայի վարդապետի Արծրունւոյ Պատմութիւն տանն Արծրունեաց», ի լոյս էած Բ. Պ., Ս. Պետերբուրգ, 1887, էջ 75, 143, 252, 279, 300)։

¹¹ «Մովսէսիս Խորենացւոյ Պատմութիւն Հայոց», աշխատասիրութեամբ Մ. Արեղան Ե. Ս. Յարութիւնեան, Տիգրիս, 1913, էջ 33։

¹² Նույն տեղում, էջ 40։

¹³ Այսպես, զը Ֆլորիվալը Թարգմանել է. «...et tout son train, s'etablit au pied d'une montagne»։ Նա ճիշտ է Թարգմանել Մովսես Խորենացու ի լեռնուտին միում բառակապակցությունը «au pied d'une montagne» թեև, չգիտես ինչու, բնագրային դաշտավայր բառը բաց է թողել, ճիշտ է Թարգմանել նաև լեռնուտին բառը նետեյալ նախադասության մեջ. (Amassia) «...puls passant le fleuve, s'en va pres de la montagne du Sud, au pied de la quelle il baillt dans des entoncemans, deux maisons a grands frails (Moïse de Khorene, auteur du v siecle, Histoire de l'Armenie. Texte armenien, et traduction francalse par P. E. Le Vaillant de Florival, Tome premier, Venise, 1841, p. 47, 59), ճիշտ են Թարգմանել նաև Մ. Էմինը և Ստ. Մալխասյանցը. «Здесь он поселился у подошвы одной горы на поляне...», «Амасия... перешед реку, идет к южной горе и там у подошвы ее в ущельях строит, с большими затратами, два дома» («История Армении Моисея Хоренского», новый перевод Н. О. Эмина, М., 1893, с. 17, 21), Ստ. Մալխասյանցը Թարգմանել է՝ «Գնում բնակվում է մի լեռան ստորոտում, դաշտավայր տեղում», «Այստեղ լեռան ստորոտում, խորշերում Ամասիան խոշոր ծախսերով շինում է երկու տուն...» (Մովսես Խորենացի, Հայոց պատմություն, ներածություն և ծանոթագրությունները ղդկտոր Ստ. Մալխասյանցի, Երևան, 1940, էջ 21, 26)։

մեկնում: Այսպես ռնոր բառգիրքը մեկնում է՝ ոտն կամ ստորոտն լերին, ստորին ծայր լերին¹⁴: Նրան են հետևում Գր. Փեշտրմալճյանը և Ստ. Մալխասյանցը¹⁵: Այսպիսով գրաբարյան լեոնոտն բառը և նրա նմանությունը կազմված սարստն բառը հոմանիշներ են, հայ մտածողության արդյունք և միևնույն իմաստն են արտահայտում: Իրանում կասկածելու առիթ չի մնա, եթե մանավանդ հաշվի առնենք Գարդման գավառի աշխարհագրական դիրքը, գավառ, որն իրոք ընկած է Տաշիր լեռների ճյուղավորումների ստորոտում՝ մի հարթավայրում և սարստն որոշիչը միանգամայն համապատասխանում է նրան:

Ավելորդ չէ նշել մի ուրիշ, մեր կարծիքով շատ ուշագրավ, հանգամանք: Բանն այն է, որ Մովսես Խորենացու մոտ վկայված է նաև լեոնոտն բառի ածանցված ձևը—լեոնոտնեայսն: Բ գրքի 27 գլխում կարդում ենք. «...գնաց զկողմամբ աղուանից պատերազմել ընդ ամենայն լեոնոտնեայսն»: Լեոնոտնեայսն բառի ուղիղ ձևը կլինի լեոն+ոտն+եայ+ք, որ անշուշտ նշանակում է լեոնան ստորոտին բնակվողներ¹⁶:

Պարզելով սարստն բառի ստուգաբանությունը, մենք ընդհուպ մոտեցանք սարստանեայսն բառի ստուգաբանությանը: Իժվար չէ արդեն կոհնել, որ Մովսես Կաղանկատվացու օգտագործած սարստն բառը, ինչպես նաև սարստանեայսն կազմված են Մովսես Խորենացու լեոնոտին և լեոնոտնեայսն բառերի նմանությամբ, հայոց լեզվի քերականության օրենքներին համապատասխան: Այստեղ առարկություն կարող է ծագել միայն սարստանեայսն բառի մեջ երկրորդ ա տառի ներկայության դեմ, քանի որ զրաբարում ոտն բառն ի հոլովմանն է պատկանում: Բայց այդ էլ կարելի է բացատրել բարբառների ազդեցությամբ: Հայտնի է, օրինակ, որ Վանի բարբառում ոտն պատկանում է ա հոլովմանը: Սրազերևով այդ երկրորդ ա-ն ևս, մենք ստանում ենք սարստանեայսն գեղեցիկ բառը, որի ուղիղ ձևը կլինի սարստանեայք:

Մենք այսբան մանրամասն կանգ առանք սարստանեայսն ընթերցվածքի և նրա հետ սերտորեն առնչվող սարստն, լեոնոտն և լեոնոտնեայսն բառերի, ինչպես և բառարանագիրքների և թարգմանիչ-գիտնականների կողմից այդ բառերին տրված մեկնաբանությունների վրա, որպեսզի կանխենք ամեն նեարավոր առարկություն: Կարծում ենք, որ այս վերլուծություններից հետո ղժվար թե այլևս առարկություն չի, եթե ասենք, որ «Աղվանից աշխարհի պատմության» ձեռագրերում հանդիպող սարստանեայսն տարբերակվածքը սարստանեայսն բառի զրազրական աղավաղումն է և, հետևաբար, սարստանիք (աշխարհաբար՝ սարստայնեք) ցեղ գոյություն չի ունեցել ոչ Հյու-

14 ռնոր բառգիրք Հայկազեան լեզուի», Է. Ա., էջ 384.

15 Գր. Փեշտրմալճյան, Բառգիրք Հայկազեան լեզուի, Է. Ա., էջ 520, Ստ. Մալխասյանց, Հայերեն բացատրական բառարան, Է. Բ., էջ 195.

16 Պեռք է ասել, որ Մովսես Խորենացու թարգմանիչները ճիշտ այդպես էլ թարգմանել են, Այսպես, ղը Ֆլորիվալը թարգմանել է՝ «...il est alle dans les contrees de Aghouank combattre contre tous les habitants du pied de la montagne» («Moise de Khorene, auteur du v siecle Histoire de l'Armenie» p. 353): Մ. Էմինը թարգմանել է՝ «...пошел через страны Ахванов воевать со всеми жителями у подношья горы» («История Армении Моисея Хоренского», с. 130): Ստ. Մալխասյանցը՝ «...նա Աղվանքի կողմերը գնաց՝ լեոնան ստորոտներում ապրող բոլոր ազգերի հետ պատերազմելու» (Մովսես Խորենացի, Հայոց պատմություն, էջ 154):

սխալին կողմատուժ, ինչպես պնդում է Վ. Առաքելյանը, և ո՛չ էլ Այսրկողմ-կատուժ:

Այսպիսով, կարելի է ապացուցված համարել, որ սարոստանայցն տարրերը ցվածքը զրազրական աղավաղում է և ինքնին անիմաստ, շնայած բառարանագիրները փորձել են ինչ որ իմաստ տալ նրան¹⁷: Ուստի առաջարկում ենք նրա փոխարեն բառարան մուծել սարոտնայի բառը, վերջինիս տալով սարերի ստորոտներում բնակվողներ բացատրությունը: Բացի այդ, քանի որ, ինչպես վերը տեսանք, սարոտն բառը «Աղվանից աշխարհի Կատմության» բնագրում վկայված է միանգամայն ինքնուրույն կերպով, ապա անհրաժեշտ է նրան գոյություն իրավու՞նք տալ և այն ևս մուծել բառարան:

СУЩЕСТВОВАЛО ЛИ ПЛЕМЯ «ՍԱՐՈՍԱՆԵԱՅՆ» («ՏԱՐՈՏԱՆԻՔ» ИЛИ «ՏԱՐՈՏԱԻՆԻ»?)

ШАВАРШ СМБАТЯН

Резюме

Неправильное разнотчение *սարոստանեացն* [саростанеацн— им. пад. *սարոստանիք*] включено в сравнительно-критический текст *Истории страны Алуанк* Мовсеса Каланкатуаци его составителем В. Аракеляном. Разнотчение *սարոստանեացն*, нашедшее место в словарях армянского языка в форме *սարոստանիք*, есть искажение правильной формы *սարոտնեացն*. Слово *саротнеацн*— сложное слово, состоящее из армянских слов *сар* [гора] + *воտн* [ступня, подошва, нога] + *еай* [суф.] + *չ* [показатель множ. числа] и означающее— *жители подножия гор*. Оно составлено по аналогу другого сложного слова *լեռնոտնեայն*— *лернотнеацн*, засвидетельствованного Мовсесом Хоренаци и имеющего тот же смысл. Следовательно, ни на Северном Кавказе, как утверждает В. Аракелян, ни тем более в Закавказье никогда не существовало мнимого племени *սարոստանիք*. Поэтому неправильное *սարոստանիք* в словарях следует заменить словом *սարոտնեայք*, а также включить в словарь слово *սարոտն*— саротн—подножие горы, засвидетельствованное лишь Мовсесом Каланкатуаци.

¹⁷ Աղվորդը չէ նշել նաև, որ Հր. Աճառյանն էլ իր հերթին սարոստանեացն բառը կապում է ոստան բառի հետ, թեև որոշակի ոչինչ չի ասում: Այսպես, ոստան բառը մեկնելով ըստ Հ. Հյուբշմանի, որպես «Նրենի»՝ քաղաքական քաղաք», նա մեջ է բերում հայ «նդիակների»՝ Վազար Փարպեցու, Մովսես Խորենացու, Փավստոս Բուզանդի վկայությունները որպես աղբյուր, քաղաքական, որից և ոստանայ՝ «քաղաքական, իշխանական»: Այս բացատրությունը տալուց հետո Հ. Աճառյանն անմիջապես հիշում է սարոստանիի գլեռներնակը» և հղում Մովսես Կաղանկատվացու վկայությունը (Հր. Աճառյան, Հայերեն արժատական բառարան, հ. III, Նրևան, 1974, էջ 570): Մեր կարծիքով Հր. Աճառյանը զուր է սարոստանիի կապում ոստան բառի հետ, քանի որ նրանց մեջ դժվար է առնչություն գտնել: Պատահական չէ, որ Ստ. Մալխասյանը, որին, անշուշտ, ծանոթ է եղել Հր. Աճառյանի ենթադրությունը, նույնիսկ չի հիշատակում նրա կարծիքը: